

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2020 թվականի
մարտի 11-ին կայացած Գիտական Խորհրդի N7 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 33-ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ

1. 2019/2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում
/զեկ. փոխդեկան Ս.Ս.Քելյան/
2. Կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը ամբիոններում
/զեկ. ամբ. վարիչներ/
3. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ
/զեկ. ամբ. վարիչ Վ.Գրիգորյան/
4. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի թվակազմում փոփոխություն կատարելու վերաբերյալ
/զեկ. դեկան Մ.Ա.Գրիգորյան/
5. Ֆակուլտետում գործող մագիստրոսական ծրագրերի մոնիթորինգի ամփոփ հաշվետվություն
/զեկ. դեկան Մ.Ա.Գրիգորյան/
6. Ընթացիկ հարցեր

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

1. **ԼՍԵՑԻՆ.** Փոխդեկան Ս.Ս.Քելյանի հաղոդքումը 2019/2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ: Նա մանրամասն ներկայացրեց լուծարքին մասնակցած ուսանողների թիվը՝ 130 ուսանող, որից 3 ուսանողը քննաշրջանի արդյունքներով ենթակա են հեռացման: Քննաշրջանն անցկացվել է պահպանելով ընթացակարգը: Գնահատականների հետ կապված դժգոհություն են հայտնել հիմնականում առաջին կուրսեցիները՝ ոչ մասնագիտական առարկաների բարդ ծրագրից:

ՄՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դեկան Մ.Գրիգորյանն ցավով նշեց, որ ոչ մի ամբիոնի վարիչ ելույթի խոսք չխնդրեց և իր կարծիքը չներկայացրեց: - Կուրզենար ամբիոնի վարիչներ կարծիքները լսել:

- Նշեմ, որ տեղյակ եմ իրավիճակից՝ մաթեմատիկա առարկայից դժգոհող ուսանողները շատ են, սակայն խնդիրը այստեղ հենց ուսանողի մեջ է, ովքեր մաթեմատիկա, քիմիա, ֆիզիկա առարկաներից ի սկզբանե ցածր գիտելիքներ ունեն: Լավ կլինի մեր ամբիոնների պատասխանատուները խոսեն ուսանողների հետ ինչպես նաև համապատասխան առարկաների դասախոսների հետ, ամբիոնի վարիչի և առարկայի դասախոսի համատեղ ջանքերով վերանայեն և վերափոխեն ուսանողին առաջարկվող առարկայական ծրագիրը՝ համապատասխանեցնելով այն մասնագիտությանը,-ասաց Մ.Գրիգորյանը: Խոսքի ավարտին նա կոչ արեց ամբիոնի վարիչներին պատասխանատվությամբ մոտենալ և ձեռքերը չլվանալ <ուսանող-ոչ մասնագիտական առարկա> առաջացած խնդիրներին, քանի որ խնդրի չլուծված թողնելը ի վերջո կբերի ուսանողների հեռացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ Ա.Թ.Գրիգորյանի, Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբ.վարիչ Վ.Գրիգորյանի, Սերվիսի ամբ.վարիչ Ս.Ռ.Սուվարյանի, Ջրաերկրաբանության և ինժեներական երկրաբանության ամբ.վարիչ Ս.Հ.Հայրոյանի, Ռեգիոնալ երկրաբանության և Օգտակար հանածոների հետախուզման ամբ.վարիչ Շ.Վ.Խաչատրյանի, Երկրաֆիզիկայի ամբ.վարիչի պաշտոնակատար Մ.Ս.Մկրտչյանի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ.վարիչ Պ.Գ.Դավթյանի հաղորդումը կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ: Բոլոր ամբիոնի վարիչները նշեցին, որ թեմաները բաշխված են, չկա որևէ ուսանող ով չի ներկայացել և անտեղյակ է իր թեմայից: Ներյկայումս ուսանողներն աշխատում են և գործընթացը գնահատեցին բավարար: Ելույթում Ս.Սուվարյանն ասաց, որ Սերվիսի ամբիոնը մշակել է կուրսային աշխատանքների կազմման հատուկ հրահանգ և խորհուրդ տվեց մյուս ամբիոններին նյունպես առաջնորդվեն նշված հրահանգով: Նա նշեց նաև, որ Սերվիս ամբիոնի հեռակա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզերի պաշտպանությունն արդեն անց է կացվել: Ուսանողները

ցուցաբերել եմ բարձր գիտելիքներ, ինչը մասամբ կապված է նաև ամբիոնի կողմից որդեգրած սկզբունքի հետ, այն է՝ ամբիոնի ուսանողները թե գիտական և թե գործնական ցանկացած աշխատանք կատարելիս կարող են մոտենալ ամբիոնի ցանկացած դասախոսի՝ անկախ նրանից թե ով է տվյալ ուսանողի գիտական ղեկավարը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

3. ԼՄԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց. Վ.Գրիգորյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ: Նա ներկայացրեց պաշտոնավարման 1 տարվա ընթացքում ամբիոնում կատարված առարկայական ծրագրերում կատարված բարեփոխումները, ուսումնական և արտադրական պրակտիկայի ծրագրերում կատարված փոփոխությունները: Նշեց ամբիոնի մասնակցությունը և ամբիոնի ջանքերով իրականացրած աշխատանքները առարկայական օլիմպիադայի կազմակերպման հարցում: Վ.Գրիգորյանը հաշվետվության մեջ ներկայացրեց նաև ամբիոնի գիտական պոտենցիալը և ամբիոնի կողմից հրատարակված գիտական հոդվածների և ուսումնական ձեռնարկների թիվը: Խոսեց նաև ուսանողների արտասահմանյան պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ ինչպես նաև ամբիոնի կողմից կազմակերպվող անվճար դասընթացներից (Հաշվետվությունը կցվում է):

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. ղեկան Մ.Գրիգորյան հարցրեց թե 1) ի՞նչ կրթական ծրագրեր են մշակվել ամբիոնում և ե՞րբ է ներկայացնելու ծրագրերի ամբողջ փաթեթերը:

2) Միջազգային ի՞նչ ԲՈՒՀ-րի հետ է համագործակցում ամբիոնը և ի՞նչ հեռանկարներ են բխելու այդ համագործակցությունից:

Ս.Հ.Հայրոյան փորձեց ճշտել, թե ինչու՞մ է կայանում առաջարկվող <Տարածաշրջանագիտություն> ծրագրի էությունը և ուղղվածությունը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Դոց.Ա.Թ.Գրիգորյանը, պրոֆ Վ.Պ.Վարդանյանը, դոց.Ա.Հ.Պոտոսյանը դոց.Մ.Ա.Գրիգորյանը նշեցին, որ Վ.Գրիգորյանի վարած այս մեկ տարվա ղեկավարումը ցույց տվեց, որ նա ունի գիտական մեծ ներուժ, աշխատասեր է, սրտացավ և նվիրված է իր գործին և գիտությանը: Նրանք բարձր գնահատեցին

ամբիոնում կատարված մեծածավալ աշխատանքը և առաջարկեցին ընդունել այն և գնահատել բավարար:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց. Վ.Գրիգորյանի հաշվետվությունն ընդունել և ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

Քվեարկության արդյունքում՝ ԿՈՂՄ-33, ՁԵՌՆՊԱՀ -0, ԴԵՄ-0

ՈՐՈՇԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց. Վ.Գրիգորյանի ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել բավարար:

4. ԼՄԵՑԻՆ. ղեկան, Գիտխորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտկան խորհրդի թվակազմում փոփոխություն կատարելու վերբերյալ: Մասնավորապես նա նշեց որ 38 հոգանոց խորհուրդը բավականին մեծ է: Ներկայացրեց խորհուրդը ձևավորելու հիմանկան կետերը և սկզբունքները, ներյակացրեց ի պաշտոնե կազմում ընդգրկված անդամների անհրաժեշտ թիվը, ուսանողների մասնաբաժինը, որը պետք է կազմի խորհրդի 25%: Հաշվի առնելով վերոնշյալները Գիտխորհրդի անդամների թիվը գործող 38-ի փոխարեն դարձնել 30 հոգի: Վերջինս թույլ կտա պահպանել համամասնությունը՝ ի պաշտոնե, հրավիրյալների և ուսանողների:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. պրոֆ.Թ.Վարդանյանը - արդյոք ցանկացած պահի մենք իրավասու ենք փոփոխություն կատարել կազմի մեջ

ՊԱՏԱՍԽԱՆ. Մ.Գրիգորյանը նշեց, որ խորհրդի կազմը հաստատվում է յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ և նշեց, որ գործող Գիտխորհրդի գործունեության ժամկետը լրանում է 2020թ սեպտեմբերին

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. 2020թ սեպտեմբերից ֆակուլտետի Գիտ.խորհրդի կազմը սահմանել 30 հոգի գործող 38-ի փոխարեն և այն ներկայացնել ռեկտորատ

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Գիտ.խորհրդի կազմը հաստատել 30 հոգի և այն ներկայացնել ռեկտորատ:

5. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի փոխդեկան պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի ամփոփ հաշվետվությունը ֆակուլտետում գործող մագիստրոսական ծրագրերի մոնիթորինգի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հավանություն տալ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի փոխդեկան պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի ամփոփ հաշվետվությանը ֆակուլտետում գործող մագիստրոսական ծրագրերի մոնիթորինգի վերաբերյալ և գնահատել այն դրական:

6. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

6.1 ԼՍԵՑԻՆ. ԼՍԵՑԻՆ. Մեթոդխորհրդի նախագահ Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը Ռեզիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի դոցենտ Հ.Բ.Մովսիսյանի և նույն ամբիոնի ասիստենտ Վ.Մ.Մանուկյանի հեղինակությամբ “Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի կիրառումը երկրաբանահանութային աշխատանքներում” ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ռեզիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի դոցենտ Հ.Բ.Մովսիսյանի և նույն ամբիոնի ասիստենտ Վ.Մ.Մանուկյանի հեղինակությամբ “Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի կիրառումը երկրաբանահանութային աշխատանքներում” ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

6.2 ԼՍԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը նույն ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Եվա Անդրանիկի Դանիելյանի թեկնածուական թեզի “ՀՀ անտառային գեոհամակարգերի կայուն կառավարման մոտեցումները կլիմայի գլոբալ փոփոխության համատեքստում” (ԻԴ.01.03 մասնագիտությամբ) վերնագրով թեման հաստատելու և ա.գ.թ., պրոֆ Թ.Գ.Վարդանյանին գիտական ղեկավար նշանակելու հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Եվա Անդրանիկի Դանիելյանի թեկնածուական թեզը հաստատել “ՀՀ անտառային գեոհամակարգերի կայուն կառավարման մոտեցումները կլիմայի գլոբալ փոփոխության համատեքստում” (ԻԴ.01.03 մասնագիտությամբ) վերնագրով և գիտական ղեկավար նշանակել ա.գ.թ., պրոֆ. Թ.Գ.Վարդանյանին:

6.3 ԼՄԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի դոցենտ Ն.Ա.Հարությունյանի հաղորդումը “Կլիմայի գլոբալ փոփոխության ազդեցությունը Ռուսաստանի և Հայաստանի լեռնային տարածաշրջանների ագրոէկոհամակարգերի վրա” թեմայով հայտը երաշխավորելու վերաբերյալ՝ “ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020” միջազգային մասնակցության մրցույթին մասնակցելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ. “Կլիմայի գլոբալ փոփոխության ազդեցությունը Ռուսաստանի և Հայաստանի լեռնային տարածաշրջանների ագրոէկոհամակարգերի վրա” թեմայով հայտը երաշխավորել՝ “ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020” միջազգային մասնակցության մրցույթին մասնակցելու նպատակով:

6.4 ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆ.Վ.Ռ.Բոյնագրյանի հաղորդումը «ՀՀ բարձր լեռնային գոտիներում սառցադաշտերի դինամիկան և լճերի զարգացումը նախկինում և ներկայում» /հայկական խմբի ղեկավար կենս.գ.թ. առաջատար գիտաշխատող, ՀԱԱ բուսաբանության ինստիտուտի հնէաբուսաբանության բաժնի վարիչ, Ի.Գ.Գաբրիելյան/ թեմայով նախագծի հաստատման և այն երաշխավորելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. «ՀՀ բարձր լեռնային գոտիներում սառցադաշտերի դինամիկան և լճերի զարգացումը նախկինում և ներկայում» թեմայով նախագիծը երաշխավորել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության Գիտության Կոմիտե:

6.5 ԼՄԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբոինի դոցենտ Ա.Հ.Պոտոսյանի հաղորդումը “Ալթայի և Կովկասի լեռնային կուլտուրական լանդշաֆտների փոխակերպումը հետխորհրդային ժամանակահատվածում (ՀՀ և Ալթայի Հանրապետության օրինակով)” թեմայով հայտը երաշխավորելու վերաբերյալ՝ “ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020” համատեղ ծրագրերի աջակցության միջազգային մասնակցության մրցույթին մասնակցելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ. “Ալթայի և Կովկասի լեռնային կուլտուրական լանդշաֆտների փոխակերպումը հետխորհրդային ժամանակահատվածում (ՀՀ և Ալթայի Հանրապետության օրինակով)” թեմայով հայտը երաշխավորել՝ “ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020” համատեղ ծրագրերի աջակցության միջազգային մասնակցության մրցույթին մասնակցելու նպատակով:

6.6 ԼՄԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբոինի պրոֆեսոր Թ.Գ. Վարդանյանի հաղորդումը «Գետային համակարգերի էկոլոգիական վիճակի գնահատման համար ջրաբանական և ջրաքիմիական տեղեկատվության հաշվառման առանձնահատկությունների մեթոդների մշակում» թեմայով հայտը երաշխավորելու վերաբերյալ՝ «ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» համատեղ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթին մասնակցելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ. «Գետային համակարգերի էկոլոգիական վիճակի գնահատման համար ջրաբանական և ջրաքիմիական տեղեկատվության հաշվառման առանձնահատկությունների մեթոդների մշակում» թեմայով հայտը երաշխավորել՝ «ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» համատեղ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթին մասնակցելու նպատակով:

Գիտական խորհրդի նախագահ՝

Մ.Ա.Գրիգորյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ե.Ս.Մանուկյան